ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, *Արցախը 18-19-րդ դարերում, Ե., Հեղ. հրատ., 2015, 420 էջ:*



Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Աբրահամյանը, տարիներ շարունակ ուսումնասիրելով Արցախի պատմությունը, վերջերս հրապարակել է մի ամբողջական աշխատություն՝ բաղկացած երկու մասից. «Արցախը 18-րդ դարում» և «Արցախը 19-րդ դարում»: Աշխատության մեջ լուսաբանված են իրադրությունը Արցախում XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին, հայ-ռուսական հարաբերությունների արմատավորումը, ազատագրական պայքարը XVIII դ. 20-ական թվականներին, համաժողովրդական պայքարը թուրք նվաճողների դեմ, Խամսայի մելիք-քությունները և Ղարաբաղի խանությունը, XVIII դ. 90-ական թվականների ողբերգությունը Արցախում, ազատագրական պայքարի նոր դրսևորումները, հայերի ներգաղթը Արցախ, երկրամասի տնտեսությունը, վարչական կառուցվածքը, հոգևոր կյանքին և գիտամշակութային խնդիրներին վերաբերող հարցեր: Աշխատության վերջում խստիվ քննադատվում են ազգերի որոշ հեղինակներ, որոնք, պետական պատվեր կատարելով, խեղաթյուրում են հայ ժողովրդի պատմությունը:

Անդրադառնանք պրոֆ. Հրանտ Աբրահամյանի ուսումնասիրության մեջ տեղ գտած որոշ հարցերի նորովի լուսաբանմանը: Նա ասում է. «Երբեք էլ չենք հավակնել, թե անպայման նորություններ կհայտնագործենք, չնայած դրանք քիչ չեն» (էջ 3): Հարգելով հեղինակի համեստությունը՝ ասենք, որ աշխատության մեջ, իրոք, բավական էական մեկնաբանություններ կան, որոնք գրավում են ընթերցողի ուշադրությունը: Ահա դրանցից մի քանիսը:

Արցախի XVIII դ. պատմությանն առնչվող հեղինակները մոռացել կամ ուղղակի շրջանցել են մի կարևոր հարց: Պետրոս Առաջինի կողմից 1723 թ. աշնանը Արցախ ուղարկված Իվան Կարապետի (որը ծննդով Արցախի Վարանդայի Շոշ գյուղից էր) նամակներից իմանում ենք, որ այն ժամանակ Արցախի մելիքների միջև հակասություններ կային, և բացակայում էր

համերաշխությունը: Մելիքներից ոմանք թուրքերի կողմն էին, ոմանք էլ՝ պարսիկների: Այդ հակասությունների պատճառով երկրամասը մեծ վնասներ էր կրում: Դրանում քիչ մեղք չուներ մանավանդ հակաթոռ Ներսեսը: Ո՞րն էր դրա պատճառը: Դարեր առաջ, արաբների, թուրք-սելջուկների, մոնղոլների զավթողական արշավանքների ժամանակ, Արցախ-Զանգեզուրից բազմաթիվ հայ ընտանիքներ ստիպված էին հեռանալ հայրենի օջախներից ու բնակություն հաստատել Շամախու և Շիրվանի կողմերում: Երբ XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին ծավալվում էր ազգային-ազատագրական պայքարը, Իսրայել Օրու և Եսայի Հասան-Զալալյանցի քարոզչության շնորհիվ Շամախու կողմերից խիզախ տղաներ են գալիս Արցախ, և այնտեղ կազմակերպվում են սղնախներ (էջ 87): Շամախու կողմից եկած յուզբաշիներ Ավանը, Թարխանը, Միրզան և ուրիշներ ղեկավարում էին սղնախները և հեղինակություն վայելում: Դա տեղական մելիքների և իշխանավորների սրտով չէր: Փաստորեն՝ սուր պայքար էր սկսվել տեղացիների և եկվորների միջև: Իվան Կարապետը, գալով Արցախ և այդ մասին իմանալով, Եսայի Հասան-Զալալյանցի հետ բավական աշխատանք է տանում՝ հաշտեցնելով հակադիր ուժերին և նրանց միջև համերաշխություն հաստատելով: Նրանք կարողանում են բազմիցս պարտության մատնել թուրք-պարսիկներին և պաշտպանել հայրենի երկրամասը:

XVIII դ. կեսին, Նադիր շահի մահից հետո ստեղծված Ղարաբաղի խանության և մելիքների միջև տեղի ունեցող պայքարի մասին որոշ հեղինակներ միայն ակնարկել են: Հ. Աբրահամյանը, հանգամանորեն ուսումնասիրելով այդ խնդիրը, ապացուցում է, որ Արցախի մելիքները չէին ճանաչում խանությունը: Նրանք ինքնիշխան կառավարում էին իրենց համայքները և չէին դադարեցնում պայքարը նույնիսկ այն ժամանակ, երբ հեռացել էին հայրենի երկրամասից: Այդ շրջանում, մինչև XVIIIդ. կեսերը, Արցախ-Ղարաբաղում ապրում էին բացառապես հայեր: Միայն խանության ժամանակ Արցախում բնակեցվում են մուսուլման ցեղեր: Հեղինակը, հանգում է այն եզրակացության, որ Արցախը դարեր շարունակ եղել է հայկական, և այնտեղ ոչ մի մուսուլման ոտք չի դրել:

Աշխատության մեջ բավական հանգամանալից է լուսաբանված Ար-ցախի XIX դ. պատմությունը, որի շատ հարցեր մնացել էին ստվերում:

Ազերի Զիա Բունիաթովը և նրա շատ հետևորդներ, կատարելով քա-ղաքական պատվեր, պնդում են, թե հայերը «եկվորներ» են. նրանք իբր Ղարաբաղ են եկել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո: Այս հորինվածքը պաշտպանություն է գտել Հեյդար Ալիևի և նրա որդի Իլհամ Ալիևի կողմից: Հ. Աբրահամյանը, անդրադառնալով այդ հարցին, ցույց է տալիս, որ արցախահայությունը դեռևս հազարամյակներ առաջ էր ապրում Քուռ և Արաքս

գետերի հովիտներում: Իսկ այն «տեսակետը», թե իբր աղվանների ազդեցությանը ենթարկված հայերը եկել են Ադրբեջան, և ազերիները նրանց տեղ են տվել, լիովին կեղծ է, հորինված, գիտական հիմքից զուրկ: Հ. Աբրահամյանը կարծում է, որ «Ադրբեջան» հասկացությունը փոխառվել է «Հարավային Ադրբեջան»-ից և գործածվել է միայն 1918 թ. սկսած, իսկ մինչ այդ տարածքը կոչվել է Ատրպատական, որը այդ ձևով էլ գործածվում է ուսումնասիրության մեջ:

1877-1878 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո շուրջ 40 հազար հայ Պարսկաստանից գաղթել է Հայաստան, Անդրկովկաս և Ռուսաստան: Նրանցից 3500 հոգի (750 հայ և հույն ընտանիքներ), որոնք կազմել են ներգաղթածների 2,8 տոկոսը, գեներալ Հ. Ք. Աբխազովի հրամանով տեղավորվում են Ղարաբաղի Բարդայի (Պարտավ) ավերակներում և նրա շրջակայքում (էջ 222-223): Արխիվային տվյալների համաձայն՝ տոթի, ջրի պակասության, բնակլիմայական անտանելի պայմանների ու տեղական իշխանությունների անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով 300 ընտանիք շուտով հեռանում են: Մնացած 450 ընտանիքը (մոտ 2000 մարդ) ապրում է բաց երկնքի տակ, ծանր պայմաններում, երբ երեք ամսվա ընթացքում մահանում են 1012 հոգի: Օգտվելով այդ վիճակից՝ շրջակայքի քոչվոր թուրք-թաթարները թալանում են նրանց ամբողջ ունեցվածքը (էջ 223-225): Մնացած ընտանիքների մեծամասնությունը հեռանում է այդտեղից: Ընդամենը մի քանի տասնյակ ընտանիք տեղափոխվում են Մարտակերտի շրջան և հիմնում երկու-երեք բնակավայր, որոնցից էր Մարաղան, որի բնակչությունը 1992 թ. ապրիլի 10-ին ցեղասպանության ենթարկվեց ազերի դահիճների կողմից:

Հետաքրքրությամբ են ընթերցվում Շուշիի XIX դ. 50-60-ական թթ. հասարակական կյանքը նկարագրող էջերը: Այդ ժամանակ Շուշիում տեղի էին ունենում երկու կարևոր իրադարձություններ. մեկը վերաբերում է արևմտահայերի սահմանադրության կողմնակիցների պայքարին (որ վկայում է համազգային խնդիրներով հուզվող՝ Շուշիի մտավորականության առկայության մասին), իսկ մյուսը՝ թեմական դպրոցը կոնսիստորիայի ենթակայությունից հանելու խնդրին: Դարի հիսնական թվականների վերջերին Կոստանդնու-պոլսում սկսված՝ սահմանադրության կողմնակիցների պայքարը հասել էր նաև Շուշի, որի հետևանքով այստեղ բացվում է հասարակական գրադարան: Այն Անդրկովկասում առաջինն էր և մեծ դեր է խաղացել Շուշիի հասարակական կյանքում:

Մյուս կարևոր հարցը. Շուշիի հասարակությունը 1859 թ. բողոք է ուղարկում Մատթեոս կաթողիկոսին՝ խնդրելով Շուշիի թեմական դպրոցին տալ Թիֆլիսի

Ներսիսյան դպրոցի կարգավիճակը: Շուշեցիների ցանկությունը կատարվում է. թեմականը դուրս է բերվում կոնսիստորիայի ենթակայությունից, և այն ղեկավարելու համար ընտրվում է հոգեբարձուների խորհուրդ: Այդ կարգը պահպանվել է մինչև թեմականի փակումը:

Կարևոր իրադարձություններ էին նաև կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի այցը Ղարաբաղ և Շուշի քաղաքին ինքնավարություն տալը: 1892 թ. Խրիմյան Հայրիկը, ընտրվելով կաթողիկոս, որոշում է լինել պատմական Հայաստանի տարածքներում, տեսնել եկեղեցիների վիճակը, ծանոթանալ հայ ժողովրդի կյանքին: Եվ ահա 1898 թ. օգոստոսի կեսերին նա Արցախ է մեկնում 400 հոգով: Լինելով Ամարասում և Գանձասարում, մի շարք այլ բնակավայրերում՝ նա օժանդակում է մի քանի եկեղեցիների վերականգնման գործին, լուծում թեմական որոշ հարցեր: Ամենուր նրան ընդունում էին սիրով ու ցնծությամբ:

Հ. Աբրահամյանը գրում է, որ Շուշին տարիներ շարունակ պայքարում էր ինքնավարության հասնելու համար: Ի վերջո, 1892 թ. հուլիսի 11-ին հաստատված կանոնադրությամբ Շուշիին և Գանձակին տրվում է ինքնավարություն: Այդ ժամանակ Շուշին ուներ 35552 բնակիչ, որոնց 20673-ը՝ հայ, 12879-ը՝ մուսուլման: Քաղաքի բոլոր հարկերի 2/3-ը վճարում էին հայերը: Ըստ կանոնադրության և ստեղծված իրավիճակի, մուսուլմանները կարող էին ընտրել պատգամավորների մեկ հինգերորդը, մինչդեռ նրանք պահաջում են պատգամավոր ընտրել հավասար քանակով: Տեղի ունեցող պայքարում հայերը հաղթանակում են: Ինքնավարության ստեղծումը մեծ նվաճում էր քաղաքի հետագա զարգացման համար:

Ուսումնասիրության վերջին՝ «Պատմակեղծարարները աղմկում են» գլուխը նվիրված է «Ղարաբաղ. Քուրուկչայ-200» գրքի հեղինակների, ինչպես և Զեմֆիրա Հաջիևայի, Միտաս Աբասովի և Չինգիզ Ղաջարի ուսումնասիրություններում Արցախի պատմության կեղծարարությունների մերկացմանը:

Հ. Աբրահամյանի աշխատության մեջ, ինչ խոսք, կան նաև բացեր, որոնք հիմնականում տեխնիկական բնույթի են: Կան մեջբերումներ ռուսերեն բնագրերից. ավելի օգտավետ կլիներ դրանք մեջբերել թարգմանաբար:

Այդուամենայնիվ, Հրանտ Աբրահամյանի աշխատությունը կարևոր ներդրում է հայոց նորագույն պատմության մեջ: Ցանկալի է տեսնել նաև գրքի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր